

## Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1981 թ. փետրվարի 23-ին Երևան քաղաքում:

1987-1997 թթ. սովորել է պետի Ձերժինսկու անվան թիվ 20 միջնակարգ դպրոցում:

1997-2002 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2003 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. հունիսին Վեհափառ Հայրապետի բարձր պնօրհնությամբ և հրամանով նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վերակացու:

Նույն թվականի հոկտեմբերի 4-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայաստանի ազատագրության մի ծրագիր XVIII դ. 60-ական թվականներին. Հովսեփ Էմին և Հովնան վարդապետ» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: